# ՍՈՎՈՐԵԼ ԱՆՆԸ ՖՐԱՆԿԻ ՀԵՏ

## ՍՈՎՈՐԵԼ ԱՆՆԸ ՖՐԱՆԿԻ ՀԵՏ

«Հետնատունը իդեալական թաքստոց է»՝ գրեց 13-ամյա Աննը Ֆրանկը 1942 թվականի հուլիսի 11-ին: Գերմանացի նացիստները գրավել էին Հոլանդիան, և հալածանքներից փախչելով՝ Աննը Ֆրանկը՝ իր ծնողների, քրոջ՝ Մարգոյի, Վան Պելսերի ընտանիքի և Ֆրից Պֆեֆֆերի հետ միասին թաքնվել էին հենց այդ Հետնատանը: Աղջիկն ավելի քան երկու տարի պիտի ապրեր այս գաղտնի թաքստոցում: Այստեղ ապրելու ժամանակ նա գրեց մի օրագիր, որը պատերազմից հետո կարդալու էին միլիոնավոր մարդիկ: Օրագրում նա նամակներ էր գրում իր հորինած ընկերուհի Կիտտիին, պատմում էր իրեն հուզող ամենինչի՝ թաքստոցում վեճերի, ուրախ պահերի, իրենց սնունդ բերող բարի մարդկանց և այլնի մասին: Աննը Ֆրանկը պատրաստվում էր պատերազմից հետո հայտնի գրող դառնալ: Սակայն 1944 թվականի օգոստոսի 4-ին թաքստոցի ութ բնակիչները մատնվեցին և ձերբակալվեցին: Աննը Ֆրանկը մահացավ Բերգեն-Բելսեն համակենտրոնացման ճամբարում տիֆից:

*Ամստերդամի կենտրոնի՝ վերևից արված լուսանկար, 1949 թ.: Լուսանկարում շրջագծված են Պրինսենխրախտ 263 հասցեն և Հետնատունը:* ▶



# 15 ՓԱՍՏ, ՈՐ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԱՆՆԸ ՖՐԱՆԿԻ ՄԱՍԻՆ

**1**

Աննըն ծնվում է 1929 թվականի հունիսի 12-ին Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում, Գերմանիայում: Ֆրանկերը հրեաներ են:

**2**

1933 թ. Հիտլերն ու իր կուսակցությունը գալիս են իշխանության: Նրանք ատում են հրեաներին:

**3**

Աննըն չորս տարեկան է, երբ տեղափոխվում է Հոլանդիա, իր ծնողների ու քրոջ՝ Մարգոյի հետ:

**4**

1940 թվականի մայիսին սկսվում է պատերազմը: Գերմանական բանակը գրավում է Հոլանդիան: Նացիստները հալածում են հրեաներին:

**5**

Աննըն իր ծննդյան տասներեքերորդ տարեդարձի համար նվեր է ստանում մի օրագիր:

**6**

1942 թ. հուլիսի 5-ին Մարգոն ծանուցագիր է ստանում՝ պետք է ներկայանա նացիստական Գերմանիա աշխատանքի:

**7**

1942 թ. հուլիսի 6-ին Աննըն, Մարգոն և իրենց ծնողները թաքնվում են հոր ընկերության շենքի հետևի մասում՝ Ամստերդամի Պրինսենխրախտ փողոցում:

**8**

Աննըի հոր աշխատակիցներից չորսը՝ Միպ Խիսը, Յոհաննես Կլեյմանը, Վիկտոր Կուգլերը և Բեպ Վոսկայլը, ինչպես նաև Միպի ամուսին Յան Խիսը օգնում են թաքստոցայիններին:

**9**

Ավելի ուշ, Հետնատանը նրանց միանում են ևս չորս հոգի՝ Հերման ու Աուգյուստ վան Պելսերը, նրանց որդի Պետերը, և Ֆրից Պֆեֆֆերը:

**10**

Հետնատանը Աննըն հաճախ է գրում. մտադիր է պատերազմը ավարտվելուն պես գիրք հրատարակել:

**11**

1944 թ. օգոստոսի 4-ին Հետնատան բնակիչները ձերբակալվում են՝ ինչ-որ մեկը մատնել է նրանց:

**12**

Մինչ օրս հայտնի չէ, թե ով է մատնել Հետնատան բնակիչներին:

**13**

Աննըն մահանում է Գերմանիայի Բերգեն-Բելսեն համակենտրոնացման ճամբարում 1945 թվականի մարտ ամսին:

**14**

Հետնատան ութ բնակիչներից միայն Օտտո Ֆրանկն է կենդանի մնում ճամբարներից հետո:

**15**

Երբ ավարտվում է պատերազմը, Օտտո Ֆրանկը Աննըի օրագրերը վերածում է գրքի՝ «Հետնատուն» վերնագրով:



*Աննը Ֆրանկ, 1940 թ.*

# ԱՆՆԸՆ և ՕԳՆՈՂ ՄԱՐԴԻԿ



Վիկտոր Կուգլեր 1900 – 1981 թթ.

Վիկտոր Կուգլերը 1933 թվականին սկսեց աշխատել Օտտո Ֆրանկի ընկերությունում: Նա հիմնականում զբաղվում էր համեմունքների վաճառքով: Հաճախ պարբերականներ ու թերթեր էր բերում թաքստոցայինների համար, որպեսզի ընթերցելու բան ունենային: Աննըն շատ էր ուրախանում, երբ Կուգլերն ամեն շաբաթ նրա համար բերում էր *Կինո և Թատրոն* շաբաթաթերթը: Պատերազմից հետո Կուգլերը այսպես էր բացատրում թաքստոցայիններին օգնելու պատճառը՝ *«Նրանք իմ ընկերներն էին, չէի կարող չօգնել:»*
Վիկտոր Կուգլեր



Յոհաննես Կլեյման 1896 – 1959 թթ.

Օտտո Ֆրանկը վաղուց էր ճանաչում Յոհաննես Կլեյմանին: 1923 թվականին, երբ Օտտո Ֆրանկը փորձել էր բանկ բացել Ամստերդամում, նա ծանոթացել էր Յոհաննես Կլեյմանի հետ: 1940 թվականից սկսած, Կլեյմանն աշխատում էր Օտտո Ֆրանկի ընկերությունում:

*«Երբ Օտտո Ֆրանկն ու իր ընտանիքը ընդհատակ էին անցել, ես համաձայնեցի հոգ տանել նրանց մասին, քանի որ գիտեի, որ նա նվիրված գործարար է և ազնիվ ու պատրաստակամ մարդ. շատերն են նրան գնահատում այդ հատկանիշների շնորհիվ:»*
Յոհաննես Կլեյման



Միպ Խիս 1909 – 2010 թթ.

Յան Խիս 1905 – 1993 թթ.1993

1933 թվականին, Միպ Խիսը սկսեց աշխատել Օտտո Ֆրանկի ընկերությունում: 1942 թվականի հուլիսի 5-ին նա և իր ամուսին Յանը գնացին Ֆրանկերի բնակարան, հնարավորինս շատ իրեր հավաքեցին և տարան թաքստոց: Մի հարցազրույցում Միպը բացատրել է, թե ինչպես օգնողներն իրենց մեջ բաժանել էին պարտականությունները՝ «Բեպը զբաղվում էր հացի ու կաթի հարցերով: Կուգլերն ու Կլեյմանը շարունակում էին ընկերության գործերը և գրքեր ու ամսագրեր էին բերում թաքստոցայինների համար: Իսկ իմ պարտականությունն էր բանջարեղեն և միս հայթայթելը:» Միպի ամուսին Յանը նույնպես օգնում էր Հետնատան բնակիչներին: Նա Դիմադրության անդամ էր և կարող էր ձեռք բերել սնունդ գնելու համար անհրաժեշտ կտրոնները:

*«Ես ի վիճակի էի օգնել այդ մարդկանց: Նրանք անզոր էին, գնալու տեղ չունեին: Ես միշտ ընդգծում եմ, որ մենք հերոսներ չենք: Ծանր իրավիճակում գտնվողներին օգնելով՝ մենք մեր մարդկային պարտքն ենք կատարել: Շատերն այդպես չէին անում, ոմանք՝ վախի պատճառով: Չի կարելի մեղադրել վախեցածներին: Եթե նրանք անկեղծորեն խոստովանում են, որ վախենում էին, ինչպես այն ժամանակ խոստովանեց ընկերներիցս մեկը, կարծում եմ՝ դա էլ է խիզախություն:»*
Միպ Խիս



Բեպ Վոսկայլ 1919 – 1983 թթ.

Բեպ Վոսկայլը սկսել էր աշխատել Օտտո Ֆրանկի ընկերությունում պատերազմից քիչ առաջ: Նա աշխատակազմի ամենաերիտասարդ անդամն էր: Երբ Ֆրանկերի ընտանիքը թաքնվեց Հետնատանը, Բեպը հենց նոր էր բոլորել 23 տարին: Օտտո Ֆրանկի ասելով՝ Աննըն ու Բեպը լավ լեզու էին գտնում իրար հետ. հաճախ մի անկյունում իրար ականջին էին փսփսում: Պատերազմի ավարտից հետո, Բեպին հաճախ էին հարցեր տալիս Աննըի ու Հետնատան մասին: Օտտո Ֆրանկին ուղղված մի նամակում Բեպը գրել է՝ «[*այդ հարցերը*] *միշտ ինձ հիշեցնում են այն ամենն, ինչ պատահել է*», այն, ինչի ականատեսն է եղել: *«Այս մեծ վիշտը ընդմիշտ մնալու է սրտումս:»*
Բեպ Վոսկայլ

Հետնատունը

1. Պահեստ
2. Ընկերության խոհանոցը
3. Դուռ դեպի Օտտո Ֆրանկի առանձնասենյակը
4. Վիկտոր Կուգլերի գրասենյակը
5. Յոհաննես Կլեյմանի, Միպ Խիսի և Բեպ Վոսկայլի գրասենյակը
6. Պահեստային տարածքներ
7. Վերնահարկ
8. Հարթակ և պտտվող գրապահարան, որը բացվում է դեպի Հետնատունը
9. Լվացարան և զուգարան
10. Օտտո, Էդիթ և Մարգո Ֆրանկերի սենյակը
11. Աննը Ֆրանկի և Ֆրից Պֆեֆֆերի սենյակը
12. Ընդհանուր սենյակ. գիշերները՝ Հերման և Աուգյուստ վան Պելսերի ննջասենյակը
13. Պետեր վան Պելսի սենյակը
14. Վերնահարկ
15. Ձեղնահարկ






Օտտո Ֆրանկ



Էդիթ Ֆրանկ-Հոլլենդեր



Մարգո Ֆրանկ

## Օտտոն օգնողների մասին

*«Ես հասկացա, որ շուտով մենք ստիպված կլինեինք թաքնվել, տեղահանության վտանգից ազատվելու համար: Պարոն վան Պելսի հետ խորհրդակցելուց հետո որոշեցինք, որ այս խնդիրը կարող էինք լուծել թաքնվելով Պրինսենխրախտ 263 հասցեում գտնվող մեր գրասենյակի հետևի տանը: Սա հնարավոր կլիներ միայն այն դեպքում, եթե պարոններ Կլեյմանն ու Կուգլերը պատրաստ լինեին կրել մեր թաքնվելու հետ կապված ամբողջ պատասխանատվությունը, և եթե համագործակցեին ընկերության երկու քարտուղարուհիները: Վերջիններն էին տիկին Միպ Խիսն ու օրիորդ Էլիզաբեթ Վոսկայլը: Չորսն էլ միանգամից համաձայնվեցին, չնայած որ լիովին գիտակցում էին ստանձնած պարտավորության վտանգավորությունը: Նացիստական օրենքի համաձայն, հրեաներին օգնողները խստիվ պատժվում էին, և ուղարկվում բանտ կամ ճամբար, կամ նույնիսկ գնդակահարվում:»*

Օտտո Ֆրանկ, Յադ Վաշեմին ուղղված նամակում, 10-ը հունիսի, 1971 թ.



Աննե Ֆրանկ



Ֆրից Պֆեֆֆեր



Հերման վան Պելս



Աուգյուստ վան Պելս-Ռյոտգեն



Պետեր վան Պելս

## Աննըն օգնողների մասին

*«Ամեն օր նրանք բարձրանում են վերև, գալիս մեզ մոտ և պարոնների հետ խոսում են ընկերության գործերի ու քաղաքականության մասին, տիկինների հետ՝ կերակուրների և պատերազմական ժամանակների դժվարությունների մասին և երեխաների հետ՝ գրքերի ու թերթերի մասին: Ինչքան հնարվոր է, ուրախ դեմք են ընդունում, ծնունդների ու տոնական օրերի համար ծաղիկներ ու նվերներ բերում, միշտ ու ամեն տեղ պատրաստ են մեզ ամեն ինչով աջակցել: Երբեք չպիտի մոռանանք այն, որ մինչդեռ ուրիշները հերոսություն են ցուցաբերում պատերազմի դաշտում կամ գերմանացիների դեմ մղվող կռվում, մեզ օգնողները հերոսություն են ցուցաբերում իրենց բարձր տրամադրությամբ ու սիրով:»*

Աննը Ֆրանկ, «Հետնատունը», 28-ը հունվարի, 1944 թ.